7806

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«10» 07 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 188 - 25

Նախաձեռնող՝ *«ԱՐՄԱՆԱ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ*
Ք. Երևան, Էրեբունի, Վարդաշեն 2 փող., 2 , 67

Գործունեությունը՝ *Արթիկի հրաբխային տուֆերի հանքավայրի հարավային տեղամասի արդյունահանում*
Շիրակի մարզ

Առդիր՝ 4 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 188 - 25

«10» հոկտեմբեր 2025թ.

Արթիկի հրաբխային տուֆերի հանքավայրի հարավային տեղամասի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝	«ԱՐՄԱՆԱ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթուղթ /Ա կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	Շիրակի մարզ, Արթիկ համայնք, Տուֆաշեն բնակավայր

Ներածական մաս. Արթիկի հրաբխային տուֆերի հանքավայրի հարավային տեղամասը գտնվում է Շիրակի մարզի Արթիկ համայնքի Տուֆաշեն բնակավայրի վարչական տարածքում՝ Տուֆաշեն բնակավայրից 370 մ, Արթիկջուր գետից 4.46 կմ հեռավորությունների վրա:

Հայցվող տարածքի հողերը հանդիսանում են Արթիկ համայնքի Տուֆաշեն բնակավայրի գյուղատնտեսական, նպատակային նշանակության հողեր:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի գ. ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը դասակարգվում է որպես Ա կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Նախատեսվող գործունեության նպատակն է իրականացնել տուֆ քարի արդյունահանում: Նախատեսվում է տեղամասը մշակել բաց եղանակով, միակողմանի, վերևից ներքև խորացող մշակման համակարգով:

Նախագծվող բացահանքի պարամետրերն են՝

-առավելագույն երկարությունը՝ 390.0 մ,

-առավելագույն լայնությունը՝ 115.0 մ,

-մշակման խորությունը՝ 9.0 մ,

-օգտակար հանածոյի մարվող պաշարը՝ 180524.0 մ^3,

-արդյունահանվող պաշարը՝ 159134.0 մ^3,

-մակաբացման ապարների ծավալը՝ 33152.0 մ^3,

-օտարման տարածքը՝ 2.59 հա

ՀՀ ԲՆՕՐՀՆԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՀՀ ԲՆՕՐՀՆԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՀՀ ԲՆՕՐՀՆԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՀՀ ԲՆՕՐՀՆԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՀՀ ԲՆՕՐՀՆԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՀՀ ԲՆՕՐՀՆԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ЭКСПЕРТНЫЙ ЦЕНТР ОЦЕНКИ ВОЗДЕЙСТВИЯ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ
ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER SNCO
02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS
ՀՀ ԵՐԵՎԱՆ
РА ЕРЕВАН
RA YEREVAN

Բացահանքի ծառայման ժամկետը կազմում է 20 տարի:

Բացահանքի հանքաստիճանների բացումը կատարվելու է ներկայիս գործող գրունտային ավտոճանապարհից դեպի բացահանքի 1724.3 մ հորիզոն ավտոճանապարհի անցումով՝ L=25 մ, b=6 մ:

Բացահանքի տուֆերի արդյունահանումը կատարվելու է մեխանիզացված եղանակով, CMP-026 մակնիշի քարհատ մեքենաների միջոցով: Արտադրանքի տեղափոխումը նախատեսվում է սպառողների տրանսպորտային միջոցներով: Ուղիղ կտրվածքի քարերի տեղափոխումը հանքախորշից մինչև 5 մ հեռավորության վրա և կուտակումը դարսակույտի մեջ կատարվելու է ձեռքով: Բուլդոզերային աշխատանքները բացահանքի շահագործման ընթացքում հանդիսանում են մակաբացման ապարների (6.4 մ^3/հերթ), արտադրական թափոնների (20.1 մ^3/հերթ) տեղափոխումը և կուտակումը, լցակույտերում ապարների տեղադրումը:

Բացահանքի լցակույտային ապարները՝ 137544.0 մ^3 ընդհանուր ծավալով, ներկայացված են մակաբացման ապարներով և արտադրական թափոններով:

Մակաբացման ապարները, ինչպես նաև հողաբուսական շերտը պահեստավորվելու են բացահանքի տարածքից դուրս, արտաքին լցակույտերում, արտադրական թափոնները և մակաբացման ապարները միասին, հողաբուսական շերտը՝ առանձին: Բացահանքում ուղիղ կտրվածքի քարերի արդյունահանման ժամանակ առաջացած արտադրական թափոնները՝ 5219.8մ^3/տարի ծավալով, T-170 բուլդոզերով տեղափոխվելու են 5-10 մ հեռավորության վրա և կուտակվելու են: Այնուհետև կուտակված թափոնները UN մակնիշի բարձիչով բարձվելու են MMZ ավտոինքնաթափի մեջ և տեղափոխվելու են դեպի արտաքին լցակույտեր՝ տեղադրված այդ բացահանքի եզրագծից դուրս, և կուտակվելու են մակաբացման ապարների հետ միասին: Տեղափոխման միջին հեռավորությունը ընդունվում է 0.15 կմ:

Ընդունված է լցակույտաառաջացման բուլդոզերային եղանակը:

Բացահանքի հարևանությամբ կազմակերպված մակաբացման ապարների և արտադրական թափոնների արտաքին լցակույտի զբաղեցրած տարածքը նախատեսվում է, որ կկազմի մոտ 0.9 հա, միջին բարձրությունը՝ 8 մ, հողային շերտի լցակույտի զբաղեցրած տարածքը՝ 0.06 հա, բարձրությունը՝ 5 մ:

Տեխնիկական և խմելու ջրի մատակարարումը կատարվելու է ավտոցիստեռներով:

Բացահանքի շահագործման տարածքում աղմուկի առաջացման աղբյուրներ կհանդիսանան տրանսպորտի տեղաշարժը, արդյունահանման, բարձման աշխատանքները: Հաշվի առնելով հանքավայրի հեռավորությունը բնակավայրից՝ շուրջ 0.3 կմ, մեկ հերթափոխով աշխատանքային ռեժիմը՝ գումարային հաշվարկային ձայնային բնութագիրը Տուֆաշեն բնակավայրի սահմաններում կգտնվի նորմայի սահմաններից շատ ավելի ցածր մակարդակի վրա (նորման 45դԲԱ):

Հայցվող տեղամասի բացահանքի կոորդինատներն ըստ ArmWGS-84 համակարգի հետևյալն են.

	X	Y
1	4497551.401	8409008.193
2	4497552.524	8408955.507
3	4497568.314	8408869.478
4	4497641.774	8408756.688
5	4497709.034	8408649.974
6	4497766.406	8408680.723

ՀՀ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՀՀ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀՀ ԵՐԵՎԱՆ
ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՀՀ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ
02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

7	4497755.896	8408709.060
8	4497685.551	8408716.098
9	4497684.828	8408863.301
10	4497700.897	8408876.428
11	4497646.377	8408931.061
12	4497610.271	8408973.656
13	4497574.165	8409016.251

Ըստ հաշվետվությունում եղած տեղեկատվության՝ հայցվող տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակներ, պատմության, բնության հուշարձաններ առկա չեն:

Բացահանքի ռեկուլտիվացիոն աշխատանքներն իրականացվելու են շահագործման աշխատանքների ավարտից հետո: Ռեկուլտիվացիայի մակերեսը կազմելու է 3.6 հա:

Ընդամենը ռեկուլտիվացման ծախսերը կազմելու են 2125.6 հազ. ՀՀ դրամ, որից կենսաբանական ռեկուլտիվացիայի համար նախատեսված է 900.0 հազ. ՀՀ դրամ:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվել են փոշենստեցման, թափոնների և կենցաղային աղբի տեղափոխման, կենսաբազմազանության պահպանման վերաբերյալ բնապահպանական միջոցառումներ:

Աշխատանքների իրականացման ընթացքում ընկերությունը նախատեսել է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված մշտադիտարկումներ, ինչի համար նախատեսված է որոշակի գումար:

Փորձաքննական հիմնավորումներ. Արթիկի հրաբխային տուֆերի հանքավայրի հարավային տեղամասի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության փորձաքննությունն իրականացվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, կադաստրի կոմիտեն և Շիրակի մարզպետարանը: ՇՄԱԳ հաշվետվությունը բազմաթիվ առաջարկություններով, դիտողություններով ուղարկվել է «ԱՐՄԱՆԱ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ-ին լրամշակման, սակայն ընկերության կողմից լրամշակումն իրականացվել է թերի, մասնավորապես՝ լրամշակված ՇՄԱԳ հաշվետվությունում չի ներկայացվել տեղեկատվություն նախատեսվող գործունեության իրականացման հետևանքով շրջակա միջավայրի վրա հնարավոր գումարային ազդեցության վերաբերյալ:

Հաշվետվության վերաբերյալ, ՀՀ օրենսդրության սահմանված կարգով, հունիսի 11-ին, Շիրակի մարզի Արթիկ համայնքի Տուֆաշեն բնակավայի վարչական ղեկավարի նստավայրում իրականացվել է հանրային քննարկում: 4-րդ հանրային քննարկումն ուղեկցվել է բազմաթիվ մտահոգիչ ելույթներով և դժգոհություններով:

Հանրային քննարկման մասնակիցների հիմնական մտահոգությունն այն էր, որ հանքավայրի արդյունահանման աշխատանքները կարող են ավելացնել արդեն իսկ առկա բնապահպանական խնդիրները, որոնք պայմանավորված կլինեն հետագա աշխատանքների

ազդեցություններով՝ փոշու առաջացումով, գյուղատնտեսական նպատակային նշանակության տարածքների կրճատումով: Դժգոհություններ եղան այն մասին, որ անհրաժեշտ է ապահովել ընկերության կողմից նախկինում շահագործված հանքավայրերի լրիվ ռեկուլտիվացիան, որից հետո դիտարկել նոր հանքավայրի շահագործման հնարավորությունը:

Շիրակի մարզի Արթիկ համայնքի Տուֆաշեն բնակավայրում 2025 թվականի հունիսի 11-ին տեղի ունեցած հանրային քննարկման վերաբերյալ Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարանի կողմից, հանրային քննարկման արձանագրությամբ ներկայացվել է բացասական կարծիք:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Ելնելով վեռնշյալ հիմնավորումներից «ԱՐՄԱՆԱ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Արթիկի հրաբխային տուֆերի հանքավայրի հարավային տեղամասի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է պետական փորձաքննական բացասական եզրակացություն:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի
ժամանակավոր պաշտոնակատար՝ Սևակ Մարկոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական
կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝ Գոհար Մինասյան